ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 124 -2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 05 » « 03 » 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Վահան Բաղալյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 15-ի N 2370-Ա/2 հրամանով «Ստեղծագործական կրթամշակութային նախագծերի» դրամաշնորհի հատկացման մրցույթի մասնագիտական խմբի 2023 թվականի օգոստոսի 8-ի նիստի N 3 արձանագրությունը՝ որոշման «1198. Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիր» ծրագրի «11008. Ստեղծագործական կրթամշակութային մանկապատանեկան ծրագրեր և նախագծեր» միջոցառման շրջանակում «ԳԱԿ. մշակութային խաչմերուկ» կրթական ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 7261.2 հազար (յոթ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված 1-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացնված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանգրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների

ասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և

աշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, որից 2904.5 հազար դրամը՝ մարտին, 2904.5 հազար դրամը՝ ապրիլին իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ

կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Պետական մարմնի կողմից սույն պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024 թվականի հուլիսի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի փետրվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտակա-նությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

դավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 11
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570022619620100
ՀՎՀՀ 02514253
Հեռ.՝ 091 49 48 44

Տնօրեն՝

_____ Ա. Բաղալյան

Կ.Տ.

Հավելված N 1
« 05 » « 03 » 2024 թ.
N ՄՇԴ - 124 -2024 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«ԳԱԿ. մշակութային խաչմերուկ» կրթական ծրագրի

1	Կազմակերպության անվանում	«Հենրիկ Իգիթյանի անվ. գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, Երևան 0001, Աբովյան 13
3	Ծրագրի անվանում	«ԳԱԿ. մշակութային խաչմերուկ» կրթական ծրագրի
3.1	Բովանդակություն	Հիմք ընդունելով 2023թ. Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից իրականացված «ԳԱԿ միջմշակութային ԱՐՏ կացարան. ժամանակակից արվեստագետների այց Վրաստանից և Իրանից» ուսումնաճանաչողական և ստեղծագործական ծրագրի հաջող իրագործումը և արդյունավետությունը, Գեղագիտության ազգային կենտրոնը հանդես է գալիս ծրագիրն ամենամյա դարձնելու նախաձեռնությամբ: 2024թ. փետրվարից նախատեսվում է մեկնարկել «ԳԱԿ մշակութային խաչմերուկ. ժամանակակից արվեստագետների այց Վրաստանից, Իրանից, Իտալիայից, Ֆրանսիայից և Շվեյցարիայից» ուսումնաճանաչողական և ստեղծագործական ծրագիրը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության հարավային և հյուսիսային հարևաններ Վրաստանի և Իրանի Հանրապետությունների, եվրոպական երկրներ Իտալիայի, Ֆրանսիայի և Շվեյցարիայի հետ՝ Հայաստանի ամբողջ տարածքում գործող իր երևանյան և մարզային ստորաբաժանումների մասնակցությամբ: Ծրագրին կմասնակցեն կերպարվեստի, թատերարվեստի, պարարվեստի ու երաժշտարվեստի ուղղությունները ներկայացնող վրացի, իրանցի, ֆրանսիացի, իտալացի և շվեյցարացի արվեստագետները՝ իրենց կողմից ներկայացրած նախագծերով: Ուսումնաճանաչողական և ստեղծագործական այս ծրագիրը կիրականացվի 18 օր տևողությամբ և կգոր-

		ծարկվի Հ. Իգիթյանի անվ. գեղագիտության ազգային կենտրոնի երևանյան և մարզային ստորաբաժանումների, ՀՀ մարզային արվեստի և գեղարվեստի դպրոցների և կրթօջախների սաների մասնակցությամբ: Ծրագրի արդյունքները կամփոփվեն Երևանում: Ծրագրի ողջ ընթացքը կնկարահանվի և կներկայացվի հոլովակի տեսքով:
3.2	Նպատակ	«ԳԱԿ մշակութային խաչմերուկ. ժամանակակից արվեստագետների այց Վրաստանից, Իրանից, Իտալիայից, Ֆրանսիայից և Շվեյցարիայից» ծրագրի նպատակն է նպաստել հարևան և եվրոպական միջև երկրների միջմշակութային կապերի ամրապնդմանն ու նորերի ստեղծմանը, խորապես ծանոթանալ և ծանոթացնել Հայաստանի, Իրանի, Վրաստանի, Իտալիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի ազգային մշակութային ավանդույթներին և ընդգծել դրանց նմանություններն ու տարբերությունները նշված երկրներում, հնարավորություն ընձեռել հայ, իրանցի, վրացի և եվրոպացի արվեստագետներին ծանոթանալու տարածաշրջանի և եվրոպական երկրների մշակույթին և զարգացման միտումներին, բացահայտելու եվրոպական մշակույթի ազդեցությունը տարածաշրջանի վրա և հակառակը:
3.3	Անցկացման ժամկետ	2024 թ. փետրվարի 1 - 2024 թ. հունիսի 30
3.4	Անցկացման վայր	Երևան, ՀՀ մարզեր՝ Տավուշ, Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Սյունիք
3.5	Ակնկալվող արդյունքներ	«ԳԱԿ. մշակութային խաչմերուկ» կրթական ծրագրից ակընկալվող արդյունքներն են՝ • նոր շունչ հաղորդել տարածաշրջանի և եվրոպական երկրների միջև միջմշակութային կապերին, • հանրահռչակել հայ ազգային մշակույթը իրանցի, վրացի, իտալացի, ֆրանսիացի և շվեյցարացի արվեստագետների լայն շրջանակում, • տարորոշել մշակութային նմանություններն ու ընդգծել դրանց տարբերությունները, • նպաստել ժամանակակից արվեստի գործիքներով ազգային, ավանդական մշակույթի վերաիմաստավորմանը, • նպաստել տեղում ստեղծագործական, ուսումնական, կրթամշակութային նոր

		ծրագրեր իրականացնելու գործընթացին, • ապահովել համապատասխան կրթական ու ստեղծագործական միջավայր մարզում ու մայրաքաղաքում ապրող երիտասարդ և կայացած ստեղծագործողների համար, • ընդլայնել ԳԱԿ երևանյան և մարզային ստորաբաժանումների գործունեությունը, • դարձնել Գեղագիտության ազգային կենտրոնը միջմշակութային հարթակ՝ տարածաշրջանի և եվրոպական երկրների միջև համատեղ նախագծերի իրականացման, ինչպես նաև՝ բազմակողմանի միջմշակութային կապերի ստեղծման/ամրապնդման համար:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	5 մասնագետ, 30 աշխատարան, 400 մասնակից, 1 ամփոփիչ ցուցահանդես, 1 կլոր-սեղան քննարկում

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 11
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570022619620100
ՀՎՀՀ 02514253
Հեռ.՝ 091 49 48 44

Տնօրեն՝

---------- Վ. Բադալյան

Կ. Տ.

Հավելված N 2
« 05 » « 03 » 2024 թ.
N ՄՇԴ-124-2024 աաումանաառհ

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ԳԱԿ. մշակութային խաչմերուկ» կրթական ծրագրի իրականացման հետ կապված ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրություն*** (ներառյալ հարկերը)				**1360.0**
	ծրագրի ղեկավար (5 ամիս)	մարդ	1	500.0	500.0
	ծրագրի համակարգող (5 ամիս)	մարդ	1	350.0	350.0
	ծրագրի մարզային պատասխանատու (18 օր)	մարդ	2	80.0	160.0
	թարգմանիչ/օգնական (բանավոր թարգմանություն՝ 18 օր)	մարդ	1	200.0	200.0
	ֆինանսական համակարգող (5 ամիս)	մարդ	1	150.0	150.0
2	**Ճանապարհածախս**				**950.0**
	ավիատոմս (Վրաստան-Երևան-Վրաստան)	հատ	1	100.0	100.0
	ավիատոմս (Իրան-Երևան-Իրան)	հատ	1	200.0	200.0
	ավիատոմս (Շվեյցարիա-Երևան-Շվեյցարիա)	հատ	1	250.0	250.0
	ավիատոմս (Իտալիա-Երևան-Իտալիա)	հատ	1	150.0	150.0
	ավիատոմս (Ֆրանսիա-Երևան-Ֆրանսիա)	հատ	1	250.0	250.0
3	**Կեցության և սննդի ծախսեր**				**2570.0**
	սննդի ծախս (Երևանում)	մարդ/օր	5/10	8.0	400.0
	հյուրանոցի ծախս (Երևանում)	մարդ/օր	5/10	25.0	1250.0
	սննդի ծախս (մարզերում)	մարդ/օր	5/8	8.0	320.0
	հյուրանոցի ծախս (մարզերում)	մարդ/օր	5/8	15.0	600.0
4	**Տրանսպորտային ծախսեր**				**280.0**
	մարդատար տրանսպորտի ծառայություն (ծրագրի ընթացքում՝ Երևան-ՀՀ մարզեր)	հատ	2	70.0	140.0
	մարդատար տրանսպորտի ծառայություն (ծրագրի ընթացքում՝ ՀՀ մարզեր-Երևան)	հատ	2	70.0	140.0
5	**Հանրահռչակմանն ուղղված ծախսեր**				**891.0**
	Roll up մետաղական բաների պատրաստման ծառայություն (2*0,85 մ՝ 2 հատ) հատ	հատ	1	60.0	60.0
	պաստառի տպագրման ծառայություն (2*2մ՝ 2 հատ)	հատ	1	50.0	50.0
	ազդագրի տպագրման ծառայություն (A 2՝ 30 հատ)	հատ	1	51.0	51.0
	վկայականի տպագրման ծառայություն (400 հատ)	հատ	1	180.0	180.0
	հոլովակի պատրաստման ծառայություն (տևող.՝ 10-15 ր)	հատ	1	200.0	200.0
	գրաֆիկական դիզայնի ծառայություն (2 ամիս)	հատ	1	350.0	350.0

	ԸՆԴԱՄԵՆԸ				6051.0
	ԱԱՀ**				**1210.2**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**7261.2**
	* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով				
	** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հենրիկ Իգիթյան անվան
գեղագիտության ազգային կենտրոն»
ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 11
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570022619620100
ՀՎՀՀ 02514253
Հեռ.՝ 091 49 48 44

Տնօրեն

_____ Վ. Բաղդասյան

Կ. Տ.

Հավելված N 3

« 05 » « 03 » 2024 թ.

N ՄՇԴ-124 -2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

---------- *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահը՝

---------- *(անուն, ազգանուն)*

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ փաստաթղթերն ընդունող պատասխանատու՝

---------- *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 4
« 05 » « 03 » 2024 թ.
Ն ՄՇԴ -124- 2024 պայմանագրի

ԱԿՏ Ն
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.